

սուսցէ, նա մեծ կոչեսցի: Զոր եւ ոչ ազա-
 ճէր ժողովել ինչս եւ ստացուածս կամ դար-
 ծաթ, այլ միշտ փոյթ եւ սէր ունէր գրոց,
 զոր Տէր Աստուած նմա արիութիւն, քաջու-
 թիւն եւ զօրութիւն տացէ՝ զօրանալ եւ բարձ-
 րանալ փառաց ի փառս եւ ի զօրութենէ ի զօ-
 րութիւն. եւ յետ աստեացս ժառանգէ զերկնից
 արքայութիւն: Որ ողորմի Տէր Աստուած ստա-
 ցողի գրոցս Տէր Ազարիայի. այլ եւ ծնողացն
 Տօրն Մեկքիսեղեկի, եւ մօրն Նսեֆին, եւ եղ-
 բարցն Սահակին եւ Նադարին, Տօրեղբարցն
 Տէր Ներսէսի եւ Կարապետի, այլ եւ քերբցն
 Շահկուլին եւ Մուղալին եւ Հոխիսիմէին,
 եւ ամենայն յարեան մերձաւորացն եւ իմ մե-
 ղապարտ գրչիս, եւ ծնողաց իմոց ննջեցե-
 լոց՝ մահեցի Մարտիրոսին եւ մօրս Դու-
 վաթ խաթունի. եւ եղբօրս Յովհաննեսի եւ
 քերբցս որ են ի մարմնի՝ ձուհարին եւ Հոխի-
 սիմէի, եւ ամենայն ազգատոհմի. եւ գրիս
 անյարմարութեան եւ սխալանաց հայցեմ նե-
 րել եւ անմեղադիր լինել, զի էի պանդուխտ
 եւ զարիպ օտար երկիրս, եւ միտք իմ ցնոր
 եւ սիրեռ, եւ միայն զկատարումն փութայի.
 եւ Աստուած որ առատ է ի տուրս բարեաց,
 տացէ ձեզ յիշողացդ եւ մեզ յիշելոցս զիւր
 առատ ողորմութիւնն եւ զերկնից արքայու-
 թիւնն եւ ինքն աւրճեալ եղիցի յաւիտեանս.
 ամէն:

Կը յաջորդէ (թղ. 590բ—594ա) Ազա-